ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/12**

«Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ -ի կարիքների համար լաբորատոր կահույքի և սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/12 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Ընթացակարգի հրավերում տեղի է ունեցել վրիպակ, ինչի արդյունքում Հավելված 1-ով սահմանվող «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*» բաժնում 5-6-րդ չափաբաժինների մասով ապրանքի մատակարարման «Ենթակա քանակ»-ը սխալ է նշված:

Փոփոխության նկարագրություն: Հրավերով «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*» բաժնում 5-6-րդ չափաբաժինների մասով ապրանքի մատակարարման «Ենթակա քանակ»-ը փոփոխել և շարադրվել են նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

- 5-րդ չափաբաժին. Ապրանքի մատակարարման «Ենթակա քանակ»-ը «16»-ը փոխարինել «6»-ով,
- 6-րդ չափաբաժին. Ապրանքի մատակարարման «Ենթակա քանակ»-ը «6»-ը փոխարինել «2»-ով:

Փոփոխության հիմնավորում: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 11)
Էլ. փոստ՝ l.hayrapetyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ